

ՆՇԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԻՑՑԱՅԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

15-ը հունիսի, 1957 թ.  
Վերանայված է 1967 թ. հունիսի 14-ին՝ Ստոկհոլմում, եւ 1977 թ. մայիսի 13-ին՝ Ժնևում,  
փոփոխված է 1979 թ. սեպտեմբերի 28-ին

ՀՈՂՎԱԾ 1

Հատուկ միության ստեղծումը. միջազգային դասակարգման ընդունումը.  
միջազգային դասակարգման սահմանումը եւ լեզուները

1) Երկրները, որոնք նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը, հիմնում են Հատուկ միություն եւ նշանների գրանցման նպատակներով ընդունում են ապրանքների եւ ծառայությունների ընդհանուր դասակարգում (այսուհետ՝ Դասակարգում):

2) Դասակարգումը բաղկացած է.

i) դասերի ցանկից, որը, անհրաժեշտության դեպքում, ուղեկցվում է բացատրություններով.

ii) ապրանքների եւ ծառայությունների այբբենական ցանկից (այսուհետ՝ այբբենական ցանկ)՝ այն դասի նշումով, որին պատկանում է յուրաքանչյուր ապրանքը կամ ծառայությունը:

3) Դասակարգումը ներառում է՝

i) Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը հիմնադրող Կոնվենցիայում նշված Մտավոր սեփականության Միջազգային բյուրոյի (այսուհետ՝ Միջազգային բյուրո) կողմից 1971 թ. հրատարակված դասակարգումը. ընդ որում, հասկացվում է, որ այդ հրատարակության մեջ ընդգրկված դասերի ցանկի բացատրությունները դիտվում են որպես ժամանակավոր եւ որպես հանձնարարական այնքան ժամանակ, քանի դեռ դասերի ցանկի բացատրությունները չեն մշակվել 3-րդ հոդվածում նշված Փորձագետների կոմիտեի կողմից.

ii) փոփոխություններ եւ լրացումներ, որոնք մինչեւ սույն Ակտի ուժի մեջ մտնելը ուժի մեջ են մտել 1957 թ. հունիսի 15-ի Նիցցայի Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի եւ այդ Համաձայնագրի 1967 թ. հունիսի 14-ի Ստոկհոլմյան Ակտի համաձայն.

iii) սույն Ակտի 3-րդ հոդվածին համապատասխան մտցված փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել սույն Ակտի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

4) Դասակարգումը պետք է լինի անգլերեն եւ ֆրանսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

5) ա) 3-րդ հոդվածի i կետում նշված դասակարգումը, 3-րդ հոդվածի ii կետում նշված փոփոխությունների եւ լրացումների հետ միասին, որոնք ուժի մեջ են մտել մինչեւ այն թվականը, երբ սույն Ակտը բաց է ստորագրման համար, պարունակվում է ֆրանսերեն մեկ վավերական օրինակում, որը ի պահ է հանձնվում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Գլխավոր տնօրենին (այսուհետ, համապատասխանաբար, Գլխավոր տնօրեն եւ Կազմակերպություն): 3-րդ հոդվածի ii կետում նշված փոփոխություններն ու լրացումները, որոնք ուժի մեջ են մտնում այն օրվանից հետո, երբ սույն Ակտը բաց է ստորագրման համար, նույնպես ի պահ է հանձնվում Գլխավոր տնօրենին՝ ֆրանսերեն մեկ վավերական օրինակով:

բ) "ա" ենթակետում նշված տեքստերի անգլերեն տարբերակը մշակվում է Փորձագետների կոմիտեի կողմից՝ սույն Ակտն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո: Դրա վավերական օրինակը ի պահ է հանձնվում Գլխավոր տնօրենին:

գ) 3-րդ հոդվածի iii կետում նշված փոփոխությունները, անգլերեն եւ ֆրանսերեն մեկական վավերական օրինակից, ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

6) Դասակարգման պաշտոնական տեքստերը՝ արաբերեն, գերմաներեն, իտալերեն, պորտուգալերեն, ռուսերեն, իսպաներեն եւ այլ լեզուներով, որոնք կարող է որոշել

5-րդ հոդվածում նշված Ասամբլեան, մշակվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ Կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո կամ այդ Կառավարությունների կողմից ներկայացված թարգմանությունների հիման վրա կամ այլ միջոցների օգտագործմամբ, որոնք Հատուկ միության կամ Կազմակերպության բյուջեի համար ոչ մի ֆինանսական հետեւանքներ չեն կարող առաջացնել:

7) Այբբենական ցանկով նշված յուրաքանչյուր ապրանքի կամ ծառայության դիմաց առկա է հերթական համարը, որը ցույց է տալիս լեզուն, որով այն կազմված է, եւ

i) հերթական համարը, որն ունի նույն նշումը անգլերենով կազմված այբբենական ցանկում, եթե խոսքը գնում է ֆրանսերենով կազմված այբբենական ցանկի մասին, եւ հակառակը.

ii) հերթական համարը, որն ունի նույն նշումը ֆրանսերենով կազմված այբբենական ցանկում կամ անգլերենով կազմված այբբենական ցանկում, եթե խոսքը գնում է 6-րդ կետին համապատասխան կազմված այբբենական ցանկի մասին:

## ՀՈՂՎԱԾ 2

Դասակարգման իրավաբանական նշանակությունը եւ օգտագործումը

1) Ելնելով սույն Համաձայնագրով նախատեսված պահանջներից՝ Հատուկ միության յուրաքանչյուր երկրում դասակարգումն ունի այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ երկրում: Մասնավորապես, դասակարգումը Հատուկ միության երկրներին չի կապում ոչ նշանի պահպանության ծավալի որոշման առումով, ոչ էլ սպասարկման նշանի ճանաչման առումով:

2) Հատուկ միության յուրաքանչյուր երկիր իրեն իրավունք է վերապահում դասակարգումն օգտագործել որպես հիմնական կամ լրացուցիչ համակարգ:

3) Հատուկ միության երկրների իրավասու գերատեսչությունները պաշտոնական փաստաթղթերում եւ նշանների գրանցման մասին հրապարակումներում ներառում են Դասակարգման դասերի համարները, որոնց վերաբերում են այն ապրանքները կամ ծառայությունները, որոնց համար գրանցվում է նշանը:

4) Այբբենական ցանկում ցանկացած անվանման ընդգրկման փաստը ոչ մի կերպ չի շոշափում այն իրավունքները, որոնք կարող են գոյություն ունենալ այդ անվանման նկատմամբ:

## ՀՈՂՎԱԾ 3

Փորձագետների կոմիտե

1) Հիմնադրվում է Փորձագետների կոմիտե, որում ներկայացված է Հատուկ միության յուրաքանչյուր երկիր:

2) ա) Գլխավոր տնօրենը կարող է եւ, Փորձագետների կոմիտեի խնդրանքով, պարտավոր է Փորձագետների կոմիտեի նիստերին որպես դիտորդ ներկայացված լինելու համար հրավիրել այն երկրներին, որոնք Հատուկ միության անդամ չեն, բայց Կազմակերպության կամ արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի անդամ են:

բ) Գլխավոր տնօրենը հրավիրում է՝ որպես դիտորդ ներկայացված լինելու Փորձագետների կոմիտեի նիստերին նշանների ոլորտում մասնագիտացած միջկառավարական կազմակերպություններին, որոնց անդամների թվի մեջ մտնում է Հատուկ միության առնվազն մեկ երկիր:

գ) Գլխավոր տնօրենը կարող է եւ, Փորձագետների կոմիտեի խնդրանքով, պարտավոր է հրավիրել այլ միջկառավարական եւ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ մասնակցելու իրենց հետաքրքրող հարցերի քննարկմանը:

3) Փորձագետների կոմիտեն՝

i) որոշումներ է ընդունում դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

ii) Հատուկ միության երկրներին ուղարկում է հանձնարարականներ, որոնք

դյուրացնում են դասակարգման օգտագործումը եւ աջակցում են դրա միատեսակ օգտագործումը.

iii) ձեռնարկում է բոլոր այլ միջոցները, որոնք Հատուկ միության կամ կազմակերպության բյուջեի համար ֆինանսական հետեւանքներ չառաջացնելով՝ նպաստում են զարգացող երկրների կողմից դասակարգման կիրառմանը.

iv) իրավասու է հիմնադրել ենթակոմիտեներ եւ աշխատանքային խմբեր:

4) Փորձագետների կոմիտեն ընդունում է ընթացակարգի իր կանոնները: Վերջիններս հնարավորություն են տալիս, որ 2-րդ հոդվածի "բ" կետում նշված միջկառավարական կազմակերպությունները կարողանան մասնակցություն ունենալ Փորձագետների կոմիտեի ենթակոմիտեների եւ աշխատանքային խմբերի նիստերին եւ եական ներդրում ունենալ դասակարգման կատարելագործման աշխատանքում:

5) Դասակարգման մեջ փոփոխություններ մտցնելու առաջարկությունները կարող են կատարվել Հատուկ միության ցանկացած երկրի իրավասու գերատեսչության, Միջազգային բյուրոյի, 2-րդ հոդվածի "բ" կետի համաձայն՝ Փորձագետների կոմիտեում ներկայացված միջկառավարական կազմակերպության եւ ցանկացած այլ երկրի կամ կազմակերպության կողմից, որոնք նման ներկայացման համար հատուկ հրավիրված են Փորձագետների կոմիտեի կողմից: Առաջարկություններն ուղարկվում են Միջազգային բյուրո, որը այն փոխանցում է Փորձագետների կոմիտեի անդամներին ու դիտորդներին ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, մինչեւ Փորձագետների կոմիտեի նստաշրջանը, որտեղ նշված առաջարկները քննարկվելու են:

6) Հատուկ միության յուրաքանչյուր երկիր ունի մեկ քվե:

7) ա) Հաշվի առնելով "բ" ենթակետի դրույթները՝ Փորձագետների կոմիտեի կողմից որոշման ընդունման համար պահանջվում է ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցած Հատուկ միության երկրների ներկայացուցիչների ձայների պարզ մեծամասնությունը:

բ) Դասակարգմանը վերաբերող ուղղումներ ընդունելու մասին որոշումն ընդունվում է ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցած Հատուկ միության երկրների ներկայացուցիչների չորս հինգերորդի կողմից: Որպես "ուղղում" անհրաժեշտ է հասկանալ ապրանքների կամ ծառայությունների տեղափոխությունը մեկ դասից մյուսը կամ ցանկացած նոր դաս կազմելը:

գ) Ընթացակարգի 4-րդ կետում նշված կանոնները նախատեսում են, որ, բացառությամբ հատուկ դեպքերի, դասակարգման ուղղումներն ընդունվեն սահմանված ժամկետների վերջում. յուրաքանչյուր ժամկետի տեւողությունը որոշվում է Փորձագետների կոմիտեի կողմից:

8) Ձեռնպահների ձայները որպես քվե հաշվի չեն առնվում:

#### ՀՈԴՎԱԾ 4

Փոփոխությունների մասին ծանուցումը, ուժի մեջ մտնելը եւ հրապարակումը

1) Փորձագետների կոմիտեի կողմից ընդունված փոփոխություններն ու հանձնարարականները Հատուկ միության երկրների իրավասու գերատեսչություններին ծանուցվում են Միջազգային բյուրոյի կողմից: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում ծանուցման ուղարկման օրից վեց ամիս հետո: Ցանկացած այլ փոփոխություն ուժի մեջ է մտնում փոփոխությունների մասին Փորձագետների կոմիտեի կողմից որոշման ընդունման պահին սահմանված ամսաթվից:

2) Միջազգային բյուրոն ուժի մեջ մտած փոփոխությունները մտցնում է դասակարգման մեջ: Այդ փոփոխությունների մասին հայտարարությունները հրապարակվում են պարբերական հրատարակություններում, որոնք որոշվում են 5-րդ հոդվածում նշված Ասամբլեայի կողմից:

#### ՀՈԴՎԱԾ 5

Հատուկ միության Ասամբլեա

1) ա) Հատուկ միությունն ունի Ասամբլեա, որը բաղկացած է սույն Ակտը

վավերացրած կամ դրան միացած երկրներից:

բ) Յուրաքանչյուր երկրի Կառավարություն ներկայացված է մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ եւ փորձագետներ:

գ) Յուրաքանչյուր պատվիրակության ծախսերը հոգում է նրան նշանակած Կառավարությունը:

2) ա) Ելնելով 3-րդ եւ 4-րդ հոդվածների դրույթներից՝ Ասամբլեան.

i) քննարկում է Հատուկ միության պահպանմանն ու զարգացմանը եւ սույն Համաձայնագրի կիրառմանը վերաբերող բոլոր հարցերը.

ii) հանձնարարականներ է տալիս Միջազգային բյուրոյին վերանայման նպատակով կոնֆերանսի նախապատրաստման հարցերով՝ պատշաճ ձեւով հաշվի առնելով Հատուկ միության երկրների դիտողությունները, որոնք չեն վավերացրել սույն Ակտը կամ չեն միացել դրան.

iii) քննարկում եւ հաստատում է Կազմակերպության Գլխավոր տնօրենի հաշվետվությունները եւ գործունեությունը, որոնք վերաբերում են Հատուկ միությանը, եւ Հատուկ միության իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ նրան տալիս է բոլոր անհրաժեշտ ցուցումները.

iv) որոշում է ծրագիրը, ընդունում է Հատուկ միության երկամյա բյուջեն եւ հաստատում նրա եզրափակիչ հաշվետվությունները.

v) հաստատում է Հատուկ միության ֆինանսական կանոնակարգերը.

vi) Հատուկ միության նպատակների իրականացման համար, 3-րդ հոդվածում նշված Փորձագետների կոմիտեից բացի, ստեղծում է փորձագետների այլ կոմիտեներ եւ աշխատանքային խմբեր, որոնք համարում է անհրաժեշտ.

vii) որոշում է, թե Հատուկ միության անդամ չհանդիսացող որ երկրները եւ որ միջկառավարական եւ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները կարող են ներկա գտնվել նրա նիստերին՝ որպես դիտորդներ.

viii) ընդունում է ուղղումներ 5-8-րդ հոդվածների վերաբերյալ.

ix) իրականացնում է ցանկացած այլ անհրաժեշտ գործողություն՝ Հատուկ միության նպատակներին հասնելու համար.

x) կատարում է, սույն Համաձայնագրին համապատասխան, նման այլ գործառնություններ:

բ) Այն հարցերով, որոնք հետաքրքրություն են ներկայացնում նաեւ այլ միությունների համար, որոնց կառավարումը իրականացնում է Կազմակերպությունը, Ասամբլեան որոշումներ է ընդունում՝ խորհրդակցելով Կազմակերպության համակարգող կոմիտեի հետ:

3) ա) Ասամբլեայի յուրաքանչյուր անդամ երկիր ունի մեկ քվե:

բ) Ասամբլեայի անդամ երկրների կեսը կազմում է քվորում:

գ) Չնայած "բ" ենթակետի դրույթներին՝ եթե որեւէ նստաշրջանին ներկայացված երկրների քանակը կեսից քիչ է, բայց հավասար է կամ գերազանցում է Ասամբլեայի անդամ երկրների մեկ երրորդը, նա կարող է որոշումներ ընդունել, սակայն Ասամբլեայի բոլոր այդպիսի որոշումները, բացառությամբ այն որոշումների, որոնք վերաբերում են ընթացակարգի իր սեփական կանոններին, ուժի մեջ են մտնում միայն ներքոհիշյալ պայմանների կատարման դեպքում: Հիշյալ որոշումները Միջազգային բյուրոն ուղարկում է Ասամբլեայի այն անդամ երկրներին, որոնք ներկայացված չեն եղել, եւ առաջարկում է որոշումների ուղարկման ամսաթվից 3 ամսվա ընթացքում գրավոր հայտնել տվյալ որոշումներին կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկելու մասին: Եթե այդ ժամկետը լրանալու դրությամբ այդ ձեւով քվեարկած կամ ձեռնպահ լինելու մասին հայտնած երկրների քանակը անբավարար է նստաշրջանի քվորումի համար անհրաժեշտ քանակից, այդպիսի որոշումներն ուժի մեջ են մտնում՝ պայմանով, որ միաժամանակ պահպանվի անհրաժեշտ մեծամասնությունը:

դ) 8-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն՝ Ասամբլեան իր որոշումներն ընդունում է տրված ձայների երկու երրորդով:

ե) Ձեռնպահների ձայները որպես քվե հաշվի չեն առնվում:

զ) Պատվիրակը կարող է ներկայացնել միայն մեկ երկիր եւ քվեարկել միայն նրա անունից:

ե) Ասամբլեայի անդամ չհանդիսացող Չատուկ միության երկրներին, որպես դիտորդների, թույլատրվում է մասնակցել նրա նիստերին:

4) ա) Ասամբլեան գումարվում է հերթական նստաշրջանի երկու տարին մեկ անգամ՝ Գլխավոր տնօրենի հրավերով, եւ բացառիկ հանգամանքների բացակայության դեպքում՝ նույն ժամանակ եւ նույն տեղում, ինչ Կազմակերպության Գլխավոր ասամբլեան:

բ) Ասամբլեան հրավիրվում է արտակարգ նստաշրջանի, որը հրավիրում է Գլխավոր տնօրենը՝ Ասամբլեայի անդամ երկրների մեկ քառորդի պահանջով:

գ) Յուրաքանչյուր նստաշրջանի օրակարգը նախապատրաստում է Գլխավոր տնօրենը:

5) Ասամբլեան ընդունում է ընթացակարգի իր կանոնները:

## ՀՈՂՎԱԾ 6 Միջազգային բյուրո

1) ա) Չատուկ միությանն առնչվող վարչական առաջադրանքները իրականացվում են Միջազգային բյուրոյի կողմից:

բ) Միջազգային բյուրոն, մասնավորապես, նախապատրաստում է նիստերը եւ ապահովում Ասամբլեայի, Փորձագետների կոմիտեի եւ նման այլ կոմիտեների ու աշխատանքային խմբերի, որոնք կարող են ստեղծվել Ասամբլեայի կամ Փորձագետների կոմիտեի կողմից, քարտուղարության գործառույթների իրականացումը:

գ) Գլխավոր տնօրենը Չատուկ միության գլխավոր գործադիր մարմինն է եւ ներկայացնում է Չատուկ միությունը:

2) Գլխավոր տնօրենը եւ նրա կողմից նշանակված անձնակազմի ցանկացած անդամ, առանց քվեարկելու իրավունքի, մասնակցում են Ասամբլեայի, Փորձագետների կոմիտեի եւ փորձագետների՝ նման այլ կոմիտեների կամ աշխատանքային խմբերի, որոնք կարող են ստեղծվել Ասամբլեայի կամ Փորձագետների կոմիտեի կողմից, բոլոր նիստերին: Գլխավոր տնօրենը կամ նրա կողմից նշանակված անձնակազմի անդամը հանդիսանում է այդ մարմինների ex officio քարտուղարը:

3) ա) Ասամբլեայի հանձնարարականներին համապատասխան՝ Միջազգային բյուրոն նախապատրաստում է Չամաձայնագրի դրույթների վերանայման կոնֆերանսներ՝ բացի 5-8-րդ հոդվածների:

բ) Վերանայման կոնֆերանսների նախապատրաստման հարցերով Միջազգային բյուրոն կարող է խորհրդակցել միջկառավարական եւ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

գ) Գլխավոր տնօրենը եւ նրա կողմից նշանակված անձինք մասնակցում են այդ կոնֆերանսների աշխատանքներին՝ առանց քվեարկելու իրավունքի:

4) Միջազգային բյուրոն կատարում է իր վրա դրված ցանկացած այլ խնդիր:

## ՀՈՂՎԱԾ 7 Ֆինանսներ

1) ա) Չատուկ միությունն ունի բյուջե:

բ) Չատուկ միության բյուջեն ներառում է հատկապես Չատուկ միության մուտքերը եւ ծախսերը, նրա վճարը միությունների համար ընդհանուր ծախսերի բյուջե, ինչպես նաեւ, համապատասխան դեպքերում, հատկացումները Կազմակերպության կոնֆերանսի բյուջեին:

գ) Միությունների համար ընդհանուր են համարվում այն ծախսերը, որոնք բացառապես չեն վերաբերում տվյալ Չատուկ միությանը, այլ միաժամանակ մեկ եւ մի քանի այլ միությունների, որոնց ղեկավարումը իրականացնում է Կազմակերպությունը: Նման ընդհանուր ծախսերում Չատուկ միության մասնաբաժինը համապատասխանում է տվյալ ծախսերում նրա շահագրգռվածությանը:

2) Չատուկ միության բյուջեն ընդունվում է՝ պատշաճ ձեւով հաշվի առնելով այլ միությունների, որոնց ղեկավարումը իրականացնում է Կազմակերպությունը, բյուջեների հետ համակարգման պահանջները:

3) Չատուկ միության բյուջեն ֆինանսավորվում է հետեւյալ աղբյուրներից.

i) Հատուկ միության երկրների վճարներից.

ii) Միջազգային բյուրոյի կողմից մատուցված՝ Հատուկ միությանը վերաբերող ծառայությունների համար վճարներից եւ մուծումներից.

iii) Միջազգային բյուրոյի՝ Հատուկ միությանը վերաբերող հրապարակումների վաճառքից կամ դրանց առնչվող հոնորարներից.

iv) Նվիրատվություններից, կտակած միջոցներից եւ լրավճարներից.

v) ռենտայից, տոկոսներից եւ տարբեր այլ եկամուտներից:

4) ա) 3-րդ հոդվածի i կետում նշված իր վճարը որոշելու նպատակով Հատուկ միության յուրաքանչյուր երկիր դասվում է այն նույն դասին, որին նա պատկանում է արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան միությունում, եւ իր տարեկան վճարները մուծում է այն նույն միավորների թվի հիման վրա, որը այդ միությունում հաստատվում է տվյալ դասի համար:

բ) Հատուկ միության յուրաքանչյուր երկրի տարեկան վճարը հավասար է այն գումարին, որը հարաբերվում է բոլոր երկրների կողմից Հատուկ միության բյուջե վճարման ենթակա ընդհանուր գումարին այնպես, ինչպես նրա միավորների քանակն է հարաբերվում վճարներ մուծող բոլոր երկրների միավորների ընդհանուր քանակին:

գ) վճարները ենթակա են մուծման յուրաքանչյուր տարվա հունվարի մեկից:

դ) Այն երկիրը, որը վճարների մուծման պարտք ունի, Հատուկ միության բոլոր մարմիններում կորցնում է քվեարկելու իրավունքը, եթե նրա պարտքի գումարը հավասար է կամ գերազանցում է նախորդ երկու լրիվ տարիների համար մուծման ենթակա վճարների գումարին: Այնուամենայնիվ, Հատուկ միության այդ մարմիններից ցանկացածը կարող է թույլատրել նման երկրին օգտվել քվեարկելու իրավունքից այդ մարմնում, եթե եւ քանի դեռ նա համոզված է, որ վճարման ուշացումը կատարվել է բացառիկ եւ անխուսափելի հանգամանքներում:

ե) Այն դեպքում, երբ մինչեւ նոր ֆինանսական ժամանակահատվածի սկիզբը բյուջեն ընդունված չէ, ֆինանսական կանոնակարգի համաձայն, գործում է նախորդ տարվա մակարդակի բյուջեն:

5) Հատուկ միության վերաբերյալ Միջազգային բյուրոյի կողմից մատուցված ծառայությունների համար մուծման ենթակա վճարների եւ ծախսերի չափը հաստատվում է Գլխավոր տնօրենի կողմից, որն այդ մասին զեկուցում է Ասամբլեային:

6) ա) Հատուկ միությունն ունի շրջանառու միջոցների հիմնադրամ, որը կազմվում է Հատուկ միության յուրաքանչյուր երկրի կողմից մուծված միանվագ վճարից: Եթե շրջանառու միջոցների հիմնադրամը դառնում է ոչ բավարար, Ասամբլեան լուծում է դրա ավելացման հարցը:

բ) Նշված հիմնադրամում յուրաքանչյուր երկրի նախնական վճարի չափը կամ այդ հիմնադրամի ավելացման նրա մասը համամասնական են այդ երկրի վճարին այն տարվա համար, երբ ստեղծվել է հիմնադրամը, կամ որոշում է ընդունվել դրա ավելացման մասին:

գ) Այդ համամասնությունը եւ վճարման պայմանները Գլխավոր տնօրենի առաջարկությամբ, հաստատվում են Ասամբլեայի կողմից այն բանից հետո, երբ նա խորհրդակցում է Կազմակերպության համակարգող կոմիտեի հետ:

7) ա) Կենտրոնական գրասենյակի մասին համաձայնագրում, որը կնքվում է այն երկրի հետ, որի տարածքում Կազմակերպությունն ունի իր կենտրոնական գրասենյակը, նախատեսվում է, որ այն դեպքում, երբ շրջանառու միջոցների հիմնադրամը կդառնա ոչ բավարար, այդ երկիրը կտրամադրի կանխավճար: Այդ կանխավճարների գումարը եւ պայմանները, ըստ որի դրանք տրամադրվում են, յուրաքանչյուր դեպքում հանդիսանում են այդպիսի երկրի եւ Կազմակերպության միջեւ առանձին համաձայնագրի առարկա:

բ) Ինչպես "ա" ենթակետում նշված երկիրը, այնպես էլ Կազմակերպությունը իրավունք ունեն գրավոր ծանուցման միջոցով չեղյալ հայտարարել կանխավճարների տրամադրման մասին պարտավորությունը: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն տարվա ավարտից երեք տարի անց, որում արվել է այդ ծանուցումը:

8) Հաշվետվությունների վերստուգումն իրականացվում է ֆինանսական կանոնակարգերի համաձայն՝ Հատուկ միության մեկ կամ մի քանի երկրների կամ, ինչպես նախատեսված է ֆինանսական կանոնակարգերում, արտաքին վերստուգողների

կողմից: Նրանք նշանակվում են Ասամբլեայի կողմից՝ Համաձայնագրին համապատասխան:

### ՀՈՂՎԱԾ 8

Համաձայնագրի 5-8-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելը

1) 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներում եւ սույն հոդվածում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ կարող են արվել Ասամբլեայի ցանկացած անդամ երկրի կամ Գլխավոր տնօրենի կողմից: Նման առաջարկությունները Գլխավոր տնօրենի կողմից ուղարկվում են Ասամբլեայի անդամ երկրներին՝ Ասամբլեայի կողմից դրանց քննարկումից առնվազն վեց ամիս առաջ:

2) 1-ին կետում նախատեսված հոդվածների ցանկացած փոփոխություն ընդունվում է Ասամբլեայի կողմից: Նման ընդունման համար պահանջվում է տրված ձայների երեք քառորդը՝ պայմանով, որ 5-րդ հոդվածի եւ սույն կետի ցանկացած փոփոխություն ընդունվում է տրված ձայների չորս հինգերորդով:

3) 1-ին կետում նախատեսված հոդվածների ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն բանից հետո մեկ ամիս անց, երբ, այդ ուղղումն ընդունելու մասին յուրաքանչյուր երկրի սահմանադրական ընթացակարգերին համապատասխան, արված գրավոր ծանուցումները Գլխավոր տնօրենի կողմից ստացվել են այն երկրների երեք քառորդից, որոնք Ասամբլեայի անդամ էին նրա կողմից այդ ուղղումն ընդունվելու ժամանակ: Նշված հոդվածներում այս ձեւով կատարած ցանկացած փոփոխություն պարտադիր է բոլոր այն երկրների համար, որոնք փոփոխություններն ուժի մեջ մտնելու պահին Ասամբլեայի անդամ են, կամ նրանց համար, որոնք նրա անդամ են դարձել այդ ժամկետից հետո՝ պայմանով, որ Հատուկ միության երկրների ֆինանսական պարտավորություններն ավելացնող ցանկացած փոփոխություն պարտադիր է միայն այն երկրների համար, որոնք ծանուցել են իրենց կողմից նման փոփոխություններն ընդունելու մասին:

### ՀՈՂՎԱԾ 9

Համաձայնագրի վավերացումը եւ միանալը. ուժի մեջ մտնելը

1) Հատուկ միության ցանկացած երկիր, որը ստորագրել է սույն Ակտը, կարող է վավերացնել այն կամ, եթե չի ստորագրել, միանալ դրան:

2) Ցանկացած երկիր, որը չի հանդիսանում Հատուկ միության անդամ, բայց Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի անդամ է, կարող է միանալ սույն Ակտին եւ այդպիսով դառնալ Հատուկ միության երկիր:

3) Վավերագրերը եւ միանալու մասին փաստաթղթերը ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

4) ա) Սույն Ակտն ուժի մեջ է մտնում հետեւյալ երկու պայմանները կատարելուց երեք ամիս հետո.

i) եթե վեց կամ ավելի երկրներ ի պահ են հանձնել իրենց վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերը.

ii) այդ երկրներից առնվազն երեքը հանդիսանում են Հատուկ միության երկիր այն օրվա դրությամբ, երբ սույն Ակտը բաց է ստորագրման համար:

բ) "ա" ենթակետում նշված ուժի մեջ մտնելը կիրառվում է այն երկրների նկատմամբ, որոնք վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերը ի պահ են հանձնել նշված ուժի մեջ մտնելու թվականից առնվազն երեք ամիս առաջ:

գ) Ցանկացած երկրի վերաբերյալ, որի վրա "բ" ենթակետը չի տարածվում, սույն Ակտն ուժի մեջ է մտնում Գլխավոր տնօրենի կողմից դրա վավերացման կամ միանալու մասին ծանուցման ամսաթվից երեք ամիս հետո, եթե վավերագրում կամ միանալու մասին փաստաթղթում նշված չէ ավելի ուշ ամսաթիվ: Վերջինիս դեպքում այդ երկրի նկատմամբ սույն Ակտն ուժի մեջ է մտնում այդ ձեւով նշված ամսաթվից:

5) Վավերացումը կամ միացումն ինքնաբերաբար հանգեցնում են սույն Ակտով նախատեսված բոլոր դրույթների ճանաչմանը եւ բոլոր առավելությունների ստացմանը:

6) Սույն Ակտն ուժի մեջ մտնելուց հետո ոչ մի երկիր չի կարող վավերացնել սույն Համաձայնագրին նախորդող որեւէ ակտ կամ միանալ դրան:

#### ՀՈՂՎԱԾ 10 Գործողության ժամկետը

Սույն Համաձայնագիրն ունի գործողության սույն ժամկետը, ինչ Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիան:

#### ՀՈՂՎԱԾ 11 Վերանայումը

1) Սույն Համաձայնագիրը կարող է ժամանակ առ ժամանակ վերանայման ենթարկվել Հատուկ միության երկրների կոնֆերանսներում:

2) Վերանայման կոնֆերանս գումարելու մասին որոշումն ընդունվում է Ասամբլեայի կողմից:

3) 5-8-րդ հոդվածների շտկումները կարող են ընդունվել կամ վերանայման կոնֆերանսում, կամ 8-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

#### ՀՈՂՎԱԾ 12 Չեղյալ հայտարարելը

1) Ցանկացած երկիր կարող է չեղյալ հայտարարել սույն Ակտը Գլխավոր տնօրենին ծանուցում ուղարկելու միջոցով: Նման չեղյալ հայտարարումը հանդիսանում է նաեւ նախորդ ակտի կամ սույն Համաձայնագրին նախորդող ակտերի չեղյալ հայտարարում, որոնք սույն Ակտը չեղյալ հայտարարած երկիրը վավերացրել է կամ որոնց միացել է. չեղյալ հայտարարումը տարածվում է միայն այն երկրի վրա, որը այն կատարել է՝ այն դեպքում, երբ Հատուկ միության մյուս երկրների նկատմամբ Համաձայնագիրը մնում է ուժի մեջ եւ ենթակա է կատարման:

2) Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում ծանուցումը Գլխավոր տնօրենի ստանալուց մեկ տարի հետո:

3) Սույն հոդվածով նախատեսված չեղյալ հայտարարելու իրավունքը երկրի կողմից չի կարող օգտագործվել մինչեւ 5 տարին լրանալը՝ այն թվականից հաշված, երբ նա դարձել է Հատուկ միության երկիր:

#### ՀՈՂՎԱԾ 13 Հղումներ Փարիզյան կոնվենցիայի 24-րդ հոդվածին

Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի 1967 թ. Ստոկհոլմյան Ակտի 24-րդ հոդվածի դրույթները կիրառվում են սույն Համաձայնագրի նկատմամբ՝ պայմանով, որ եթե հետագայում փոփոխություններ մտցվեն այդ դրույթներում, ապա, ըստ ժամանակի, վերջին փոփոխությունը սույն Համաձայնագրով կիրառվում է Հատուկ միության այն երկրների նկատմամբ, որոնք պարտավորված են նման փոփոխությամբ:

#### ՀՈՂՎԱԾ 14 Ստորագրումը. լեզուները. ավանդապահի գործառույթները. ծանուցումները

1) ա) Սույն Ակտը ստորագրվում է մեկ բևոթինակով՝ անգլերեն եւ ֆրանսերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են եւ ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

բ) Սույն Ակտի պաշտոնական տեքստերը կազմվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ Կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո, եւ սույն Ակտը ստորագրվելու օրվանից երկու ամսվա ընթացքում՝ երկու այլ լեզուներով՝ իսպաներեն



Եւ ռուսերեն, որոնցով "ա" ենթակետում նշված այլ լեզուների հետ մեկտեղ ստորագրված են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը հիմնադրող կոնվենցիայի վավերական տեքստերը:

գ) Շահագրգիռ Կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո Գլխավոր տնօրենի կողմից սույն Ակտի պաշտոնական տեքստերը կազմվում են արաբերեն, իտալերեն, գերմաներեն եւ պորտուգալերեն, ինչպես նաեւ այլ լեզուներով, որոնք կորոշի Ասամբլեան:

2) Սույն Ակտը բաց է ստորագրման համար մինչեւ 1977 թ. դեկտեմբերի 31-ը:

3) ա) Գլխավոր տնօրենը իր կողմից հաստատված սույն Ակտի ստորագրված տեքստի երկու պատճենները ուղարկում է Հատուկ միության բոլոր երկրներին, եւ, ըստ հարցման, ցանկացած այլ երկրի Կառավարության:

բ) Գլխավոր տնօրենը իր կողմից հաստատված սույն Ակտի ցանկացած փոփոխության երկու պատճենները ուղարկում է Հատուկ միության բոլոր երկրների Կառավարություններին եւ, ըստ հարցման, ցանկացած այլ երկրի Կառավարության:

4) Գլխավոր տնօրենը սույն Ակտը գրանցում է Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում:

5) Գլխավոր տնօրենը արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի բոլոր մասնակից երկրների Կառավարություններին ծանուցում է՝

i) (i) (1) կետի համաձայն՝ ստորագրությունների մասին.

ii) (ii) վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերը 9(3) հոդվածի համաձայն ի պահ հանձնելու մասին.

iii) (iii) 9(4)(ա) հոդվածի համաձայն՝ սույն Ակտն ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին.

iv) (iv) 8(3) հոդվածի համաձայն՝ սույն Ակտի վերաբերյալ փոփոխությունների ընդունման մասին.

v) (v) նման փոփոխություններն ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին.

vi) 12-րդ հոդվածի համաձայն ստացված չեղյալ հայտարարումների մասին:

Ուժի մեջ է մտել 06.03.2005 թ.